

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 11.04.2016թ. թիվ 10/4-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ սահմանվել է Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Գիտավերլուծական կենտրոն) գործունեության կարգը: Այն Պալատի խորհրդին առընթեր խորհրդակցական մարմին է և չի հանդիսանում Պալատի ստորաբաժանում:

Գիտավերլուծական կենտրոնը՝

- Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունված և Պալատին տրամադրված գործերով ներկայացնում է երրորդ կողմի կարծիք (amicus curiae).
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կամ այլ միջազգային դատարանում քննվող գործերով, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է երրորդ կողմի կարծիք (amicus curiae).
- Պալատի նախագահի կամ խորհրդի առաջարկով ներկայացնում է որևէ իրավական ակտի կամ իրավական ակտի նախագծի վերաբերյալ գրավոր կարծիք (մեկնաբանություն).
- Պալատի նախագահի կամ խորհրդի առաջարկով ներկայացնում է փաստաբանական գործունեությանն առնչվող իրավական բնույթի հարցի վերաբերյալ գրավոր կարծիք (մեկնաբանություն).
- Պալատի նախագահի կամ խորհրդի առաջարկով մշակում է գիտամեթոդական ձեռնարկներ:

Գիտավերլուծական կենտրոնի աշխատանքները համակարգում է Գիտավերլուծական կենտրոնի համակարգողը: Գիտավերլուծական կենտրոնի համակարգողին երկու տարի ժամկետով նշանակում է Պալատի խորհուրդը՝ Պալատի նախագահի ներկայացմամբ: Գիտավերլուծական կենտրոնի աշխատանքներին մասնակցելու համար կարող են հրավիրվել իրավունքի տարբեր բնագավառների մասնագետներ, փաստաբաններ, այլ իրավաբաններ և իրավապաշտպաններ (**այսուհետ՝ փորձագետներ**), որոնք կարող են կատարած աշխատանքի համար վարձատրվել Գիտավերլուծական կենտրոնի համար ստացված ֆինանսական միջոցներից:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի **20 հունվարի 2023թ. թիվ 3/8-Ա** որոշմամբ Պալատի խորհրդին առընթեր Գիտավերլուծական կենտրոնի համակարգող է նշանակվել փաստաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու **Արտակ Ասատրյանը** (արտոնագիր թիվ 1302):

Գիտավերլուծական կենտրոնն իր աշխատանքները կազմակերպում է մշտական կամ ժամանակավոր փորձագետների ներգրավման միջոցով:

Փորձագետներին նշանակում կամ ազատում է Պալատի նախագահը:

Բեռնել Գիտավերլուծական կենտրոնի կանոնակարգը